

## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՃԱՇ ԵՒ ԸՆԹՐԻՔ. — ԿՈՉՈՒՆՔ. — ԲԱՐՈՅԱԿԱՆԸ

**Վ**այրերու եւ կահուց անկենդան նկարագրէն՝ անցնինք տեսնել անոնց աշխոյժ ու գործունեայ վիճակը, որ աւելի հետաքրքրական է: Նկատենք մեր նախնիքը հաւարուած իրենց ճաշարանին մէջ, եւ բազմած՝ ընտանեօք կամ բարեկամօք՝ իրենց սեղանին շուրջ: Տեսնենք անոնց պաշտած «զծուխ ծխանի», եւ անոր ներքեւ ճարճատող բոցին վրայէն դէպ ի ճաշարան փոխադրուած համեղաճաշակ կերակրները. «զվագելն եղանց եւ զվագելն եղջերուաց» մեր որսասէր ազատաց առջեւ, եւ բերուիլն ի խոհանոց, թէ «նաւասարդի առաւօտուն» (Մագ. 87) եւ թէ լուր օրերու երեկոյին՝ որոնք հաւասարապէս հրապուրիչ են մեզ: Եւ քննութեան բնական կարգով՝ հանդիսականէն յառաջ հետազօտելու ենք հանապազօրեայն, կոչունքէն յառաջ պարզ ճաշը: